ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մարտի 23-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2022 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը հաստատելու մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Թ.Մ.Մկրտչյան:**

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի որոշումը՝ **հաստատել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2022 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը:

Ցանկ

Ներքին և արտաքին շահառուներին 2022 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների

№	Պետական կառավար-ման կամ տեղական ինքնակառավարման մարմինը	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի առաջարկած հետազոտական ուղղությունները	Պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի առաջարկած թեման
1.	ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով	Մրցակցություն և կարգավորում	Բուսական ծագմամբ յուղերի շուկայի ուսումնասիրություն
2.	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	Հանրային ծառայությունների արդյունավետություն	Էլեկտրաէներգիայի սակագների տարբերակման և սպասարկման վճարների սահմանման ուսումնասիրություն

3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	1. Սոցիալական զարգացում և աշխատանքի շուկա 2. Աշխատուժի միգրացիա	Կենսաթոշակային, աշխատանքի և զբաղվածության քաղաքականությունները սոցիալական պետության ձևավորման համատեքստում
4.	ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների կառավարման նախարարություն	1. Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում 2. Տարածական զարգացում	Լիազորությունների ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման ուղղություն
5.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	1. Կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում 2. Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտություններ ու զարգացում 3. Մշակութային անվտանգություն	Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության ֆինանսավորման արդյունավետության բարձրացման ուղիները
6.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	1. Տնտեսության ներառական զարգացում 2. Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում 3. Կարգավորում և մրցակցություն 4. Ագրարային քաղաքականություն	Գյուղատնտեսության ոլորտում 2010-2021 թթ. պետական օժանդակության ծրագրերի արդյունավետության գնահատում

		5. Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր 6. ՀՀ տնտեսական քաղաքականությունը ԵԱՏՄ անդամակցության համատեքստում 7. Տնտեսական անվտանգություն	
7.	ՀՀ առողջապահության նախարարություն	Առողջապահության կառավարում	Ապահովագրության շրջանակներում հատուցվող դեղերի փաթեթում ընդգրկված դեղերի շուկայի հետազոտություն
8.	Երևանի քաղաքապետարան	Քաղաքային տնտեսություն	«Կանաչ քաղաք» ռազմավարության մշակման և կենսագործման հիմնախնդիրները (Երևան քաղաքի օրինակով)
9.	Ներքին շահառու	Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետություն	ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հաստիքացուցակների կազմման, հաստիքների և պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման ուսումնասիրություն

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մարտի 23
Երևան